Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ԿՍ-05/20.04.20-ԱՄ **ծածկագրով գնման բաց մրցույթի**

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ հայտարարում է բաց մրցույթ Կաուստիկ սոդա (տեխնիկական կծու նատրիում, հեղուկ վիճակում, ԳՈՍՏ 2263-79) 40 տոննա՝ 100% կոնցենտրացիայի հաշվարկով, գնելու համար:

Մատակարարման ժամկետ է սահմանվում մինչև 2020թվականի սեպտեմբերի 10-ը:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հայտերը ներկայացնել հայերեն կամ ռուսերեն, մինչև 08.06.2020թ. ժամը15^{00}, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

Հայտերի բացումը տեղի կունենա 08.06.2020թ. ժամը 15^{30}-ին, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում:

Մրցույթների պատվիրատուն և ֆինանսավորողը «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն է:

Մրցույթի հաղթողի ընտրությունը կկատարվի գնային գնահատման սկզբունքով:

Մրցույթի հրավերի և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, հեռ. (223) 6-07-12, ֆաքս (223) 2-36-12, էլ.փոստ՝ info@raztes.am :

Անհրաժեշտության դեպքում դիմել Ընկերության ԳՏՏ-գլխավոր ճարտարագետ, գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մնացականյանին, բջջ.հեռ (093) 93-22-33:

ՀՐԱՎԵՐ

1. Սույն հրավերը տրամադրվում է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից 2020թ. ապրիլի 21-ին տեղեկագրերում հրապարակված ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ԿՍ-05/20.04.20-ԱՄ ծածկագրով կառուստիկ սոդայի գնման բաց մրցույթի հայտարարության հիման վրա:

2. Մրցույթի ծածկագիրը՝ **ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ԿՍ-05/20.04.20-ԱՄ**:

3. Հայտը ներկայացնել Գնումների մասին օրենքի 30 հոդվածի համաձայն:

4. Մասնակցի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատումը կկատարվի ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման 59-րդ կետի պահանջներին համապատասխան, իսկ մասնակցի կողմից հայտարարություն չներկայացնելու դեպքում՝ Գնումների մասին օրենքի հոդված 6-ին համապատասխան:

5. Գնման առարկայի բնութագիրը՝

Կառուստիկ սոդա (տեխնիկական կծու նատրիում, հեղուկ վիճակում, ԳՕՍՏ 2263-79), 40 տոննա՝ 100% - կոնցենտրացիայի հաշվարկով:

6. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

7.Պայմանագրի նախագիծը տրամադրվաում է մասնակցի գրավոր պահանջով:

8. Մրցույթն իրականցվում է մեկ փուլով, առանց չափաբաժինների: Մատակարարման ժամկետ է սահմանվում մինչև 2020թվականի սեպտեմբերի 10-ը:

9. Հայտով ներկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:

10. Հայտով ներկայացված առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը «ՀրազՋԷԿ» -ի տարածք:

11. Հայտի և պայմանագրի ապահովումն իրականացվում է Գնումների մասին օրենքի 32 և 35 հոդվածների համաձայն

12. Հայտը ներկայացնել Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ փաստաթղթային ձևով, մեկ բնօրինակ, հայերեն կամ ռուսերեն, մինչև **08.06.2020թ. ժամը15^{00}**, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

13.Մրցույթին առնչվող հարցերով դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, գնահատող հանձնաժողովի քարտուղարին,
հեռ. (223) 6-07-12, ֆաքս (223) 2-36-12, էլ.փոստ՝ info@raztes.am:

14. Հայտերը կբացվեն **2020թ. հունիսի 08-ին ժամը 15.30-ին** նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության:

15. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման դրույթներով:

16. Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո, տվյալ քիմիական նյութը ձեռքբերելու, պահելու, փոխադրելու համար թույլտվության պետական գրանցման փաստաթուղթ ներկայացնելու պայմանով:

17. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները կամ ընդունված որոշումները բողոքարկելու՝ մասնակցի իրավունքը և կարգը սահմանված է գնումների մասին օրենքի 46 և 50 հոդվածներով:

18. Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

19. Սույն գնման հայտի առնչությամբ պատվիրատուն այլ տեղեկատվություն չունի:

ԳՏՏ-Գլխավոր ճարտարագետ,
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մնացականյան